ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 66-Ն

«03» հունիսի 2021 թվական **գյուղ Մայիսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 24-Ի <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ <<ՄԱՐՄԱՇԵՆԻ ՀԵՆՐԻԿ ՍԵՐՈԲՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԹԻՎ 217 ՈՐՈՇՈՒՄԸ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ կետի դրույթներով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է՝

Հաստատել

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ղեկավարի 2021 թվականի մայիսի 24-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքում <<Մարմաշենի Հենրիկ Սերոբյանի անվան մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին>> թիվ 217 որոշումը:

2.<<Մարմաշենի Հենրիկ Սերոբյանի անվան մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ

ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	Կողմ՝	*Դեմ՝*	*Ձեռնպահ՝*
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ՝	----------	----------	----------
Ա. ԶԱՔԱՐՅԱՆ՝	----------	----------	----------

Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ՝ ---------- ---------- ----------

Գ. ՄԿՐՏՉՅԱՆ՝ ---------- ---------- ----------

Կ. ՂԱՆԴԻԼՅԱՆ՝ ---------- ---------- ----------

Ջ. ՂԱՖԱՐՅԱՆ՝ ---------- ---------- ----------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԴՐՄԵՅԱՆ

/ՓՈԽԱՐԻՆՈՂ/

«03» հունիսի 2021 թվական
գյուղ Մայիսյան

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Մարմաշեն համայնքի ավագանու
2021 թվականի հունիսի 03-ի թիվ 66-Ն որոշման

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
<<ՄԱՐՄԱՇԵՆԻ ՀԵՆՐԻԿ ՍԵՐՈԲՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>>
ՀԱՄԱՅՆՔԱՅԻ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի «Մարմաշենի Հենրիկ Սերոբյանի անվան մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (հետագայում՝ հաստատություն) համարվում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող հաստատություն, որն իրականացնում է նախադպրոցական կրթական ծրագրեր: Հաստատությունը «մանկապարտեզ» տեսակի նախադպրոցական ուսումնական հաստատություն է: Հաստատության հիմնադիրը ՀՀ Շիրակի մարզի Մարմաշեն համայնքն է (այսուհետ՝ հիմնադիրը), որի անունից հանդես է գալիս ՀՀ Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ղեկավարը:

1.2.Հաստատության իրավականությունը ծագում է նրա ստեղծման (պետական գրանցման) և դադարում է լուծարման ավարտի (լուծարման պետական գրանցման) պահից:

1.3.Հաստատությունն ունի ՀՀ զինանշանի պատկերով և իր հայերեն անվանմամբ կլոր կնիք, կարող է ունենալ իր անվանմամբ ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ:

1.4.Հաստատությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ քաղաքացիական Օրենսգրքով (այսուհետ՝ Օրենսգիրք), «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք), ՀՀ իրավական այլ ակտերով և սույն կանոնադրությամբ:

1.5.Հաստատությունն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով:

Հաստատությունը պատասխանատվություն չի կրում հիմնադրի պարտավորություններ համար:

1.6.Հայաստանի Հանրապետությունը և համայնքները պատասխանատվություն չեն կրում Հաստատության պարտավորությունների համար: Հասատատությունն իր հերթին պատասխանատվություն չի կրում Հայասատանի Հանրապետության և համայնքների պարտավորությունների համար:

1.7. Հաստատության անվանում է՝

հայերեն լրիվ՝ «Մարմաշենի Հենրիկ Սերոբյանի անվան մանկապարտեզ» համայքային ոչ առևտրային կազմակերպություն կրճատ՝ «Մարմաշենի Հենրիկ Սերոբյանի անվան մանկապարտեզ» ՀՈԱԿ

1.8.Հաստատության գտնվելու վայրը և իրավաբանական (փոստային) հասցեն է՝ ՀՀ, Շիրակի մարզ, գ. Մարմաշեն:

2.ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ՈՒ ՆՊԱՏԱԿԸ

2.1.Հաստատության ստեղծման նպատակն է նախադպրոցական կրթական գործունեության իրականացումը:

2.2.Հաստատության կողմից իրականացվող գործունեության տեսակներն են.

-Նախադպրոցական կրթություն. երեխաների համակողմանի դաստիարակություն,

-Առողջ սննդի կազմակերպում,

-Երեխաների ֆիզիկական և հոգևոր առողջ ապրելակերպի ձևավորում:

Իր առջև դրված խնդիրների արդյունավետ իրականացման համար հաստատությունը՝

- Համագործակցում է արտասահմանյան երկների առաջատար կրթական կազմակերպությունների և կրթական ծրագրեր իրականացող միջազգային կազմակերպությունների հետ,
- Հաստատությունը համագործակցելով ընտանիքի հետ, ապահովում է

◊ հաստատությունում ընդգրկված նախադպրոցական տարիքի երեխաների ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը,

◊ առողջության ամրապնդումն ու խնամքը,

◊ մայրենի լեզվով հաղորդակցվելը և դրա հիմքի վրա օտար լեզուների տիրապետման նախադրյալները, հաշվելու տարրական կարողությունների զարգացումը,

◊ վարվեցողության տարրական կանոններին, հայրենի բնության և բնապահպանության, պատմության և ազգային մշակույթի տարրերին ծանոթացմանը,

◊ հայրենիքի նկատմամբ սիրո և նվիրվածության զարգացման ձևավորումը,

◊ աշխատանքային տարրական կարողությունների և հմտությունների ծանոթացմանը,

◊ զարգացման շեղումների կանխարգելումն ու շտկումը,

◊ դպրոցական ուսուցման նախապատրաստումը:

- իր կողմից կնքված պայմանագրերի ու համաձայնագրերի հիման վրա իրականացնում է երկկողմանի ու բազմակողմանի կապեր Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների հիմնարկների, այլ կազմակերպությունների, իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ,
- պայմանագրային հիմունքներով ներգրավում է այլ կազմակերպությունների կամ անհատների,
- կատարում է տարատեսակ աշխատանքներ կադրերի պատրաստման, մասնագետների փոխանակման և այլ բնագավառներում,

2.3. Հաստատությունը կարող է իրականացնել միայն օրենքով կամ հիմնադրի որոշմամբ ուղղակիորեն նախատեսված գործունեության տեսակներ:

Օրենքով սահմանված գործունեության առանձին տեսակներով Հաստատությունը կարող է զբաղվել միայն լիցենզիայի առկայության դեպքում՝ լիցենզիա ստանալու պահից կամ նրանում նշված ժամկետում: Եթե լիցենզիայի հատկացման պայմաններում նախատեսված է, որ Հաստատությունը բացի լիցենզավորվող գործունեությունից այլ գործունեությամբ զբաղվել չի կարող կամ սահմանափակումներ են դրվում գործունեության առանձին տեսակներով զբաղվելու վրա, ապա Հաստատությունը լիցենզիայի գործողության ժամկետում իրավունք չունի զբաղվել այլ գործունեությամբ, բացառությամբ լիցենզիայով նախատեսվածների կամ այն գործունություններով, որոնց մասին նշված է լիցենզիայի մեջ:

3.ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ, ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1.Պետական գրանցման պահից Հաստատությունը ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ:

Հաստատությունը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից կնքել պայմանագրեր, ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

Հաստատությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, Հայաստանի Հանրապետության և (կամ) օտարերկրյա բանկերում՝ հաշվարկային բանկային հաշիվներ (ինչպես Հայաստանի Հանրապետության դրամով, այնպես էլ տարադրամով):

3.2.Հաստատությունը կարող է լինել այլ կազմակերպության հիմնադիր (մասնակից) միայն հիմնադրի որոշմամբ:

3.3.Հաստատությունն իրավունք ունի ստեղծել (հիմադրի որոշմամբ) առանձնացված ստորաբաժանումներ (մասնաճյուղեր և ներկայացուցչություններ), ինչպես Հայաստանի Հանրապետության այնպես էլ այլ պետությունների տարածքում:

Կառավարչական, սոցիալ-մշակութային, կրթական կամ ոչ առևտրային բնույթի այլ գործունեություն իրականացնելու համար Հաստատությունը կարող է ստեղծել հիմնարկներ:

Օտարերկրյա պետություններում առանձնացված ստորաբաժանումների ստեղծումն իրականացվում է տվյալ երկրի օրենքներին համապատասխան, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ:

Հաստատության առանձնացված ստորաբաժանումները և հիմնարկները իրավաբանական անձիք չեն և գործում են Հաստատության հաստատած կանոնադրությունների հիման վրա, իսկ նրանց ղեկավարները գործում են Հաստատության լիազորագրերի հիման վրա:

3.4.Հաստատությունը իրավունք ունի.

-Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված ցանկացած ձևերով ձեռք բերել գույք, այդ թվում արժեթղթեր, տիրապետել, օգտագործել ու տնօրինել դրանք և դրանցից ստացված եկամուտը կամ այլ օգտակար արդյունքը,

-ինքնուրույն կազմավորել իր ֆինանսական ռեսուրսները, այդ թվում փոխառու միջոցների ներգրավմամբ, Հայաստանի Հանրապետությունում և այլ պետություններում

ստանալ բանկային և առևտրային վարկեր, այդ թվում՝ արտարժույթով, օրենսդրությամբ սահմանված կարգով իր անունից թողարկել և տարածել արժեթղթեր,

-հիմնադրի որոշումների կամ սույն կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը,

-մեկ տարուց ոչ ավելի ժամկետով իրեն ամրացված գույքը հիմնադրի անունից հանձնել վարձակալության,

-օտարել, վարձակալության տալ, փոխանակել, օրենսդրությամբ չարգելված այլ ձևերով փոխանցել գույքային իրավունքներ, լինել գրավառու և գրավատու,

-օրենսդրությամբ սահմանված կարգով արտահանել և ներմուծել գույքի օբյեկտներ, արտադրված, գնված և այլ օրինական ձևով ստացված արտադրանք, ծառայություններ մատուցել և աշխատանքներ կատարել օտարերկրյա իրավաբանական անձանց և (կամ) ձեռնարկությունների, կազմակերպությունների և քաղաքացիների համար, օգտվել նրանց կատարած աշխատանքներից և մատուցած ծառայություններից, այլ պետություններում նրանց օրենսդրությանը համապատասխան իրականացնել ներդրումներ, ստեղծել իրավաբանական անձինք և (կամ) ձեռնարկություններ և անդամակցել իրավաբանական անձանց և (կամ) ձեռնարկությունների,

-օգտվել օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներից:

3.5.Հաստատությունն իրավունք չունի իրեն ամրացված գույքը կամ դրա նկատմաբ իր իրավունքները օտարել, գրավ դնել, հանձնել անհատույց օգտագործման:

3.6.Հաստատությունը պարտավոր է.

-օրենսդրությամբ կամ այլ իրավական ակտերով սահմանված կարգով իրականացնել հաշվապահական հաշվառում և ներկայացնել վիճակագրական հաշվետվություն,

-աշխատանքային պայմանագրեր կնքել Հաստատության աշխատակիցների հետ,

-պատասխանատվություն կրել և փոխհատուցել իր կողմից հասցված վնասը՝ կնքած պայմանագրերը չկատարելու կամ պատշաճ չկատարելու, այլ անձանց սեփականության իրավունքը խախտելու համար,

-օրենսդրությամբ սահմանված կարգով հայտարարել Հաստատության սնանկացման մասին այն դեպքում. երբ հնարավոր չէ բավարարել պարտատերերի օրինական գույքային պահանջները,

-հրապարակել իր տարեկան ֆինանսական հաշվետվությունը,

-ապահովել Հաստատության փաստաթղթերի (Հաստատության կանոնադրության, գույքի նկատմամբ գույքային իրավունքները հաստատող փաստաթղթերի, Հաստատության ներքին փաստաթղթերի, առանձնացված ստորաբաժանումների ու հիմանարկների կանոնադրությունների, տնօրենի հրամանների, հրահանգների ու կարգադրությունների, Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ փաստաթղթերի) պահպանումը,

-կրել օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ պարտավորություններ:

4. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾԸ ԵՎ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

4.1.Հաստատության երեխաների համակազմի համալրման կարգը և խմբերի առավելագույն խտությունը սահմանվում է պետական կրթական չափորոշիչներով:

4.2.Հաստատություն ընդունվում են մինչև 6,5 տարեկան երեխաները՝ առողջության մասին բժշկական տեղեկանքի հիման վրա:

4.3.Հաստատությունում կրթադաստիարակչական գործունեությունը կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության (այսուհետ՝ նախարարություն) կողմից երաշխավորված նախադպրոցական կրթության համալիր ծրագրին համապատասխան: Հաստատությունը կարող է մշակել և նախարարության հետ համաձայնեցնելով, իրականացնել նաև նախադպրոցական կրթության հեղինակային ծրագրեր:

4.4.Հաստատության աշխատանքային ռեժիմը, Հաստատությունում երեխաների մնալու տևողությունը, կրթադաստիարակչական խմբերի համալրման և սննդի կազմակերպման կարգը որոշվում է նախախարության մեթոդական ցուցումներին համապատասխան: Թույլատրվում է Հաստատության կամ առանձին խմբերի գործունեության կազմակերպումը ցերեկային, երեկոյան ժամերին, շուրջօրյա,

հանգստյան և տոնական օրերին, ինչպես նաև երեխաների ազատ հաճախումը Հաստատություն:

4.5.Հաստատության երեխաների բժշկական սպասարկումն իրականացվում է Հաստատության հաստիքային բժշկական աշխատողների միջոցով, որոնք, Հաստատության տնօրինության հետ պատասխանատվություն են կրում երեխաների առողջության, ֆիզիկական զարգացման, բուժկանխարգելիչ միջոցառումների անցակցման, սանիտարահիգիենիկ նորմերի, ռեժիմի պահպանման և սննդի որակի համար:

4.6.Հաստատության մանկավարժական և սպասարկող անձնակազմերը համայնքի բյուջեի հաշվին պարբերաբար ենթարկվում են բժշկական քննության:

5.ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

5.1.Հաստատության կրթադաստիարակչական գործընթացի մասնակիցները երեխաներն են, ծնողները (օրինական ներկայացուցիչներ), մանկավարժական աշխատողները:

5.2.Երեխաների ընդունելության ժամանակ Հաստատության տնօրինությունը պարտավոր է ծնողներին (օրինական ներկայացուցիչներին), ծանոթացնել կանոնադրությանը և այլ փաստաթղթերին, որոնք կանոնակարգում են Հաստատության գործունեությունը:

5.3.Հաստատության և ծնողների փոխհարաբերությունները կարգավորվում են նրանց միջև կնքված պայմանագրով:

5.4.Երեխայի և Հաստատության աշխատողների փոխհարաբերությունները կառուցվում են համագործակցության, երեխայի անհատականության հանդեպ հարգանքի հիման վրա:

5.5.Հաստատությունում աշխատանքի ընդունվում են այն անձինք, ովքեր ունեն նախարարության հաստատած որակավորման բնութագրի պահանջներին համապատասխան անհրաժեշտ մասնագիտական-մանկավարժական որակավորում:

5.6.Հաստատության աշխատողների իրավունքները, սոցիալական երաշխիքներն ու արտոնությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, Հաստատության կանոնադրությամբ և աշխատանքային պայմանագրով:

5.7.Հաստատության աշխատողներին իրավունք ունեն սահմանված կարգով մասնակցելու Հաստատության կառավարմանը, համատեղությամբ կատարելու գիտական, ստեղծագործական և մանկավարժական բնույթի աշխատանքները:

6.ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՐԸ

6.1.Հաստատության հիմնադիրն ունի Հաստատության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք, բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի:

6.2.Հաստատության հիմնադիրն իրավունք ունի՝

-հետ վերցնել իր կողմից Հաստատությանն ամրացված գույքը (այդ թվում՝ գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումներ),

-կասեցնել կամ ուժը կորցրած ճանաչել Հաստատության տնօրենի Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները,

-վերահսկողություն իրականացնել Հասատատությանն ամրացված համայքնային սեփականություն հանդիսացող գույքի օգտագործման և պահպանության նկատմամբ,

-հայցով դիմել դատարան՝ Օրենքի կամ սույն կանոնադրության պահանջների խախտմամբ կատարված խոշոր գործարքը անվավեր ճանաչելու նպատակով,

-օգտվել Օրենքով և Հաստատության կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներից:

6.3.Հաստատության հիմնադիրը պարտավոր է՝

-ապահովել Հաստատության բնականոն գործունեությունը,

-չհրապարակել Հաստատության գործունեության վերաբերյալ գաղտնիք պարունակող տեղեկություններ,

-կատարել Հաստատության նկատմամբ ստանձնած պարտավորությունները,

-պահպանել սույն կանոնադրության դրույթները:

7.ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔՆ ՈՒ ՇԱՀՈՒՅԹԸ

7.1.Հաստատությունը հանդիսանում է սեփականատեր՝

-Հաստատության հիմնադրի կողմից (հիմնադրման ժամանակ և հետագայում) սեփականության իրավունքով հանձնված գույքի,

-Հաստատության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքի,

-Ստացված եկամուտների

Հաստատության սեփականության ներքո կարող է գտնվել ցանկացած գույք՝ բացառությամբ գույքի առանձին տեսակների, որոնք օրենքին համապատասխան չեն կարող պատկանել իրավաբանական անձանց:

Հաստատության գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները, կապված գույքը Հաստատության սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով:

7.2.Հաստատության հիմնադիրը Հաստատության սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ:

7.3.Հաստատության հիմանդիրը կարող է Հաստատությանն անժամկետ ու անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել ցանկացած գույք:

Ամրացված գույքի օգտագործման արդյունքում Հաստատության ստացած եկամուտները հաստատության սեփականությունն են:

Ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են:

7.4.Հաստատության գույքի վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:

7.5.Շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների համար սահմանված կարգով ու չափով հարկերը, տուրքերը պարտադիր այլ վճարումներ կատարելուց հետո մնացած, սահմանված կարգով մաքուր շահույթը Հաստատությունն օգտագործում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների (Հաստատության տեխնիկական հագեցվածության բարելավում, այդ թվում հիմնական միջոցների ձեռքբերման ճանապարհով, հաստատության աշխատանքային գործունեությունը ապահովող գույքի և նյութերի ձեռքբերում, պարգևատրումների, հավելավճարների և խրախուսման այլ միջոցներով Հաստատության աշխատակիցների սոցիալական պաշտպանվածության բարձրացում, աշխատակիցների որակավորման բարձրացման նպատակով դասընթացների կազմակերպում կամ մասնակցություն կազմակերված դասընթացներին և այլն) իրականացման համար: Հաստատության շահույթի օգտագործման կարգը սահմանում է Հիմնադիրը:

8.ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

8.1.Հաստատության կառավարման մարմիններն են Հաստատության հիմնադիրը և տնօրենը:

8.2.Հաստատության կառավարման բարձրագույն մարմինը Հաստատության հիմնադիրն է, որն իրականացվում է Հաստատության ընդհանուր կառավարումը, որն ունի Հաստատության գործունեությանը և կառավարման վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք, բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի:

Հաստատության հիմնադիրը Հաստատության բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում սույն կանոնադրությամբ սահմանված գործունեության չկատարման կամ անպատշաճ իրականացման համար:

8.3.Հաստատության հիմնադրի իրավասությանն են պատկանում

1.Հաստատության կանոնադրության մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը, Հասատատության կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ,

2.Հաստատության սեփականության իրավունքով հանձնվող գույքի կազմի հաստատումը,

3.Հաստատությանն ամրացվող համայնքային սեփականություն հանդիսացող գույքի կազմի հաստատումը,

4.Հաստատության կազմակերպումը

5.Հաստատության լուծարումը,

6.Հաստատության լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշիռների (լուծարման ամփոփիչ, լուծարման միջանկյալ և լուծարման հաշվեկշիռներ) հաստատումը,

7.այլ կազմակերպությունների հիմնադրումը,

8.այլ կազմակերպություններում մասնակցության մասին որոշումների ընդունումը,

9.Հաստատության կառավարման համակարգի սահմանումը, Հաստատության տնօրենի նշանակումը, նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,

10.Հաստատության գործունեության վերահսկողության իրականացումը,

11.Հաստատության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ Հաստատության կողմից իրականացվող գործունեության տեսակների սահմանումը,

12.Հաստատության աուդիտն իրականացնող անձի հաստատումը,

13.աուդիտի իրականացման որոշումն ընդունելը,

14.Հաստատության տարեկան ծախսերի, այդ թվում արտաբյուջետային եկամուտների և ծախսերի նախահաշվի հաստատումը,

15.Հաստատության տարեկան հաշվետվությունների, տարեկան հաշվապահական հաշվեկշռի հաստատումը,

16.Հաստատության շահույթի ու վնասների օգտագործման կարգի մասին որոշման ընդունումը,

17.Հաստատության մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմանրկների աշխատանքի տարեկան արդյունքների հաստատումը,

18.Հաստատության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքներ (որոնց արժեքը, գործարքին փոխկապակցված այլ գործարքների հետ միասին, գերազանցում այդ գործարքների կատարելու մասին որոշման օրվանը նախորդող եռամսյակի արդյունքներով սահմանված զուտ ակտիվների մեծության 1/2-ը) կատարելուն համաձայնություն տալը,

19.Հաստատության առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ստեղծումը, գործունեության դադարեցումը, դրանց կանոնադրությունների հաստատումը,

20.Հաստատության ներքին գործունեությունը կարգավորող փաստաթղթերի (Հաստատության ներքին փաստաթղթեր) ընդունումը,

21.Ղեկավար պաշտոնատար անձանց աշխատանքի վարձատրման պայմանների որոշումը:

Հաստատության Հիմնադիրն իրավունք ունի որոշումներ ընդունել նաև Օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված ցանկացած այլ հարցի շուրջ:

8.4.Հաստատության ընթացիկ արտադրատնտեսական, ֆինանսական և այլ գործունեության ղեկավարումը իրականացնում է տնօրենը, որին նշանակում և ազատում է Հիմնադիրը երեք տարի ժամկետով: Տնօրեն կարող է նշանակվել բարձրագույն կրթություն ունեցող, Հայաստանի Հանրապետության գործունակ ցանկացած քաղաքացի, բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի: Հաստատության և Հաստատության տնօրենի միջև աշխատանքային պայմանագիրը հիմնադրի անունից ստորագրվում է համայնքի ղեկավարի կողմից: Պայմանագրում սահմանվում են տնօրենի իրավունքները, պարտականությունները, փոխհարաբերութունները Հիմնադրի հետ, նրա աշխատանքի վարձատրման

պայմանները, պայմանագրի դադարման հիմքերը (այդ թվում՝ Օրենքով նախատեսված բոլոր դեպքերը), այլ դրույթներ, որոնք կողմերը կգտնեն անհրաժեշտ:

Տնօրենը լուծում է բոլոր հարցերը, բացի Հաստատության Հիմնադրի իրավասությանը վերաբերվող հարցերից: Տնօրենը օրենքով, Հիմնադրի որոշումներով, աշխատանքային պայմանագրով, սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում ղեկավարում է Հաստատության գործունեությունը և կրում է պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, Հիմնադրի որոշումների, սույն կանոնադրության, աշխատանքային պայմանագրի պահանջները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Հրավիրում է Հաստատության մասնակիցների հերթական ու արտահերթ ընդհանուր ժողովները, կազմակերպում է Հաստատության մասնակիցների ընդհանուր ժողովների որոշումների կատարումը, հաշվետու է ընդհանուր ժողովին և իրավունք չունի մասնակիցների համար պարտադիր որոշումներ կայացնելու:

Տնօրենը լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով Հաստատությանը, Հիմնադրին, պետությանը պատճառած վնասի համար, ընդ որում տնօրենի լիազորությունների դադարեցումը հիմք չէ պատճառած վնասը հատուցելու պարտականությունը չկատարելու համար:

Հիմնադրի անունից հանդես եկող պաշտոնատար անձը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ղեկավարը) պարտավոր է օրենքով սահմանված կարգով լուծել վերը նշված վնասի փոխհատուցման հարցը, հակառակ դեպքում նա կրում է լրիվ գույքային պատասխանատվություն:

Տնօրենի բացակայության դեպքում Հիմնադրի գրավոր որոշման համաձայն տնօրենի լիազորություններն իրականացնում է այլ անձ:

Հաստատության տնօրենը պետք է գործի բարեխղճորեն և ողջամիտ՝ ի շահ իր կողմից ներկայացվող Հաստատության:

8.5.Հաստատության տնօրենը իր իրավասության սահմաններում

1. առանց լիազորագրի գործում է Հաստատության անունից, ներկայացնում է նրա շահերը պետության, նրա մարմինների, այլ կազմակերպությունների և քաղաքացիների հետ հարաբերություններում, այլ պետություններում և միջազգային կազմակերպություններում,

2. տնօրինում է Հաստատության գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները,

3. կնքում է պայմանագրեր, այդ թվում աշխատանքային,

4. արձակում է հրամաններ սովորողների ընդունելության, նրանց նույն դասարանում թողնելու, հեռացնելու, վերականգնելու, համապատասխան արձակուրդ ձևակերպելու մասին,

5. կազմակերպում է Հաստատության կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքը՝ ապահովելով դրանց ներդաշնակ գործունեությունը,

6. տալիս է լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր,

7. բանկում բացում է հաշվարկային և այլ հաշիվներ,

8. սահմանում է Հաստատության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները,

9. տալիս է համապատասխան լիազորագրեր,

10. իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

11. կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալների միջև,

12. սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից է ազատում Հաստատության աշխատակիցներին,

14.աշխատակցի նկատմամբ կիրառում է խրախուսական և կարգապահական պատասխանատվության միջոցներ,

15.սույն կանոնադրության 8.3.կետի 1, 4-6, 11, 14, 16, 16-20 ենթակետերով սահմանված հարցերի մասին առաջարկություններ է ներկայացնում Հիմնադրին,

16.իրականացնում է Օրենքով, Հիմնադրի որոշումներով, սույն կանոնադրությամբ իրեն վերապահված կամ Հիմնադրի կողմից տրված այլ լիազորություններ և հանձնարարություններ:

8.6.Հաստատության գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են Հիմնադիրը, Հիմնադրի կողմից լիազորված անձը, օրենքով նախատեսված այլ պետական կառավարման մարմիններ:

Հաստատության տարեկան ֆինանսական հաշվետվության հավաստիությունը վերստուգելու համար Հիմնադիրն իրավունք ունի ամեն տարի ներգրավել

Հաստատություն, Հաստատության տնօրենի հետ գույքային շահերով չկապված արհեստավարժ վերստուգիչի՝ աուդիտորի (արտաքին աուդիտ):

9.ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ

9.1.Հայաստանի Հանրապետության տարածքում և նրանից դուրս Հաստատությունը չունի մասնաճյուղեր և ներկայացուցչություններ:

10.ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

10.1.Հաստատությունը, նրա Հիմնադրի որոշմամբ, կարող է կամովին վերակազմակերպվել կամ լուծարվել՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

Հաստատությունը կարող է դատական կարգով վերակազմակերպվել կամ լուծարվել միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

Եթե լուծարվողը Հաստատության գույքի արժեքն անբավարար է պարտատերերի պահանջները բավարարելու համար, ապա այն կարող է լուծարվել միայն սնանկության հետևանքով:

10.2.Հաստատությունն իրավունք ունի վերակազմավորվել հարյուր տոկոս համայնքային (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի համայնքային) մասնակցությամբ ընկերության կամ հիմնադրամի:

10.3.Հաստատության լուծարման դեպքում Հաստատության պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի բյուջե:

10.4.Հաստատությունը համարվում է լուծարված, իսկ նրա գործունեությունը դադարած այդ մասին իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում համապատասխան գրանցում կատարելու պահից: